

АРМЯНСКИЙ СУДЕБНИК КАК ИСТОЧНИК АРМЯНСКОГО СРЕДНЕВЕКОВОГО ПРАВА

М. А. МУРАДЯН

В статье рассматривается проблема источников древнего и средневекового права. Изучаются обычное право, судебный прецедент, нормативно-правовые акты и договоры.

Досконально показаны судебники средневековой Армении и Киликийского государства, которые стали важными источниками права.

THE ARMENIAN CASE OF LAW AS THE SOURCE OF THE MEDIEVAL ARMENIAN LAW

M. A. MURADYAN

The author examined problems of sources of medieval law. He thoroughly considered statute books of Medieval Armenia and Cilicia.

ՀԱՆՐԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

Ա. Ս. ՂԱՄԲԱՐՅԱՆ

*ՀՀ գլխավոր դատախազության իրավական
ապահովման և եվրաինտեգրման բաժնի պետ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ*

Քրեական դատավարության գիտության մեջ առաջարկվել է հանրայնությունը դիտարկել որպես քրեական դատավարության սկզբունք¹ և այն ամրագրել քրեական դատավարության օրենսգրքում²:

Ուկրաինայի Հանրապետության նոր քրեական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 2012թ. ապրելի 13-ին) 25-րդ հոդվածում որպես քրեական դատավարության սկզբունք նշվել է հանրայնությունը, որի համաձայն՝ դատախազը, քննիչը քրեական հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու (բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական վարույթը կարող է սկսվել միայն տուժողի դիմումի հիման վրա) կամ հանցագործության մասին հաղորդում ստանալու դեպքում պարտավոր են իրենց իրավասության շրջանակներում սկսել մինչդատական վարույթ և ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները հանցագործության հանգամանքները և այն կատարողին պարզելու ուղղությամբ:

¹ Տե՛ս *Алексеев Н. С., Даев В. Г., Кокорев Л. Д.* Очерк развития науки советского уголовного процесса, Воронеж, 1980, էջ 40:

² Տե՛ս *Бандурин С. Г.* Публичность как принцип уголовного судопроизводства и его действие в стадии возбуждения уголовного дела, Автореф. дисс. к. ю. н., Саратов, 2004, էջ 5:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 7-րդ հոդվածում նույնպես քրեական վարույթի հանրայնությունը ամրագրվեց որպես քրեական դատավարության սկզբունք:

Քրեական վարույթի հանրայնությունը պահանջում է համալիր հետազոտություն, ուստի սույն հոդվածում կներկայացնենք դատավարագիտության մեջ նշված սկզբունքի բովանդակության վերաբերյալ հիմնական մոտեցումները, այս սկզբունքի կարգավորման ուրվագծերը եւ հանրայնության սկզբունքից թույլատրելի շեղումները:

Հանրայնության սկզբունքի բովանդակության վերաբերյալ արտահայտվել են տարաբնույթ մոտեցումներ: Մ. Աշիրբեկովան, վերլուծելով հանրայնության սկզբունքի բովանդակության վերաբերյալ դատավարագիտության մեջ արտահայտված մոտեցումները, առանձնացրել է նշված սկզբունքի հետևյալ պահանջները՝ դատավարական գործունեություն իրականացնող պաշտոնատար անձանց և պետական մարմինների նախաձեռնողականության եւ ակտիվության զուգակցում, իրավասու սուբյեկտների պաշտոնական պարտականությունը՝ հարուցելու քրեական հետապնդում, իրականացնելու քննություն և լուծելու քրեական գործը, պետական մարմինների և պաշտոնատար անձանց պարտականությունը՝ հետազոտելու գործի բոլոր հանգամանքները և ապահովելու գործին մասնակցող անձանց իրավունքները և օրինական շահերը, դատարանի և քրեական հետապնդման մարմնի պարտականությունը՝ օգտագործելու իրենց իշխանական լիազորությունները, իրենց գործունեության մեջ ցուցաբերել նախաձեռնողականություն, վարույթ իրականացնող պետական մարմինների և պաշտոնատար անձանց պատասխանատվությունը դատավարական գործունեության ընթացքի և արդյունքների համար³:

Հանցավոր ոտնձգությունից անձին, հասարակությանը և պետությանը պաշտպանելը պետության սահմանադրական պարտականությունն է: ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ կառավարությունն ապահովում է հասարակական կարգի պահպանությունը, միջոցներ է ձեռնարկում օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման ուղղությամբ: Հանրայնության սկզբունքը պահանջում է քրեական վարույթի հանրային մասնակիցներից արդյունավետորեն լուծել պետության առջև դրված՝ հանցավոր ոտնձգությունից անձի, հասարակության և պետության պաշտպանության խնդիրը:

Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական վարույթի իրականացումը հանրային գործունեություն է, որի ընթացքում և արդյունքում ապահովվում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը: Քրեական դատավարությունը պետական գործունեության ինքնուրույն տեսակ է, որտեղ քննվում և լուծվում են ենթադրյալ հանցանք կատարած անձի և պետության միջև ծագած հանրային-իրավական վեճերը: Քրեադատավարական քաղաքականության մշակման և իրականացման ոլորտում պետք է ապահովվել հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը:

Հանրային շահի առարկան այն բարիքներն են, որոնք անհրաժեշտ են հասա-

³ Տե՛ս *Аширбекова М. Т.* Принципы публичности уголовного судопроизводства: понятие, содержание и пределы действия. Автореф. дисс. д. ю. н., Екатеринбург, 2009, էջ 61:

րակության, որոշակի սոցիալական խմբի բնականոն գործառնության եւ զարգացման համար⁴: Քրեական դատավարությունում հանրային շահեր ներկայացնում են քրեական վարույթի հանրային մասնակիցները: Հանրային շահի առարկան կազմում են մասնավորապես՝ հանցագործությունների բացահայտումը, մեղավորներին պատասխանատվության ենթարկելը, ապօրինի քրեական հետապնդման ենթարկված անձանց արդարացումը եւ, այդ առումով, հասարակական համակարգի կայունության եւ անվտանգության ապահովումը:

Քրեական դատավարությունում մասնավոր շահեր ներկայացնում են քրեական վարույթի մասնավոր սուբյեկտները (մասնավորապես՝ մեղադրյալ, տուժող): Մասնավոր շահերի առարկան կազմում են անձնային նշանակության արժեքները եւ հետաքրքրությունները (պատասխանատվությունից ազատվել, մեղմ պատժի ենթարկվել, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում եւ այլն):

Քրեական դատավարությունում հանրային եւ մասնավոր շահերը միմյանց փոխլրացնում են, դիալեկտիկորեն փոխկապակցված են, սակայն չեն ենթարկվում մեկը մյուսին, չեն կլանվում միմյանցով: Քրեական դատավարությունում հանրային եւ մասնավոր շահերի զուգակցման խնդրի լուծման բարդությունը դրսևորվում է նրանում, որ նշված շահերը շատ հաճախ հակադիր են. մի կողմից հանրային շահը պահանջում է օրենսդրությամբ նախատեսել այնպիսի դատավարական ձև, որը հնարավորություն կտա արագ բացահայտել հանցագործությունը, մեղավորներին ենթարկել պատասխանատվության, մյուս կողմից՝ մասնավոր շահը պահանջում է քրեական դատավարության մասնավոր մասնակիցների, հատկապես՝ մեղադրյալի իրավունքների պաշտպանության հստակ և կանխատեսելի կառուցակարգեր, որոնց պայմաններում քրեական հետապնդման մարմինների հայեցողությունը էապես սահմանափակվում է:

Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արդարադատությունը, քրեական հետապնդումը, դատախազական հսկողությունը և հանրային այլ գործունեություն իրականացվում են բացառապես իրավունքի շահից ելնելով՝ օրենքի հիման վրա ստեղծված իրավասու մարմինների կողմից: Այս դրույթից բխում է, որ՝

- Քրեական վարույթի հանրային մասնակիցներն իրենց գործառնությունները պարտավոր են իրականացնել անկախ քրեական վարույթի մասնավոր սուբյեկտի կամահայտնությունից: Այսպես, առերևույթ հանցանքի մասին հաղորդման առկայության դեպքում դատախազը կամ քննիչն իրենց իրավասության սահմաններում պարտավոր են քրեական վարույթ նախաձեռնել՝ անկախ վարույթի մասնավոր սուբյեկտների կամքից (բացառությամբ մասնավոր մեղադրանքի գործերի): Դատախազը, բավարար հիմքերի առկայության դեպքում, պարտավոր է հարուցել քրեական հետապնդում (անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշում կայացնել) անկախ տուժողի ցանկությունից, և նույնիսկ նրա կամքին հակառակ:

⁴ Հանրային շահի տեսական հիմքերի մասին տես *Ломаев А. Ю.* Публичный интерес как правовая категория. Автореф. дисс. к. ю. н., Казань, 2012; *Маслаков А. В.* Надзор как процессуальная форма защиты публичных интересов: Теоретические проблемы. Автореф. дисс. к. ю. н., Саратов, 2009:

- Արդարադատությունը, քրեական հետապնդումը և դատախազական հսկողությունը հանրային գործունեություն են և դրանք իրականացնող սուբյեկտները ղեկավարվում են ոչ թե մասնավոր շահերով, այլ իրավունքի պահանջներով: Եթե հանրային գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձինք քրեական վարույթում ունեն անձնական շահագրգռվածություն, ապա դա քրեական վարույթի հանրային մասնակցի բացարկի կամ ինքնաբացարկի հիմք է:

- Հանրային գործառույթների իրականացման ոլորտում իրավունքի շահը պահանջում է, որ հատկապես քրեական հետապնդման հարուցման, քննության, դատախազական հսկողության, մեղադրանքի պաշտպանության հանրային գործառույթներն իրականացնող պետական մարմինները և պաշտոնատար անձինք, առանց մեղադրական հակվածության, ձեռնարկեն օրենքով նախատեսված բոլոր միջոցները գործի օբյեկտիվ և ամբողջական հանգամանքները պարզելու ուղղությամբ: Օրինակ՝ դատախազը քրեական հետապնդում հարուցելիս, դատարանում մեղադրանք պաշտպանելիս՝ պարտավոր է ձեռնարկել բոլոր օրինական միջոցները ապահովելու, որ քրեական գործով ձեռք բերվեն ինչպես արդարացնող, այնպես էլ մեղմացնող ապացույցներ, որոշում կայացնի օրենքի խախտմամբ ձեռք բերված մեղադրական ապացույցն անթույլատրելի ճանաչելու մասին, եթե նույնիսկ այդ ապացույցը մեղադրանքի հիմնավորման համար ունի կարևոր նշանակություն:

Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Ֆիզիկական և իրավաբանական անձինք իրավունք ունեն դատավարական օրենսգրքով նախատեսված մասնակցություն ունենալ քրեական վարույթում հանրային շահերի պաշտպանությանը: Քրեական դատավարությունում հանրային եւ մասնավոր շահերի խորը եւ փոխադարձ կապերի մասին է վկայում այն, որ առանձին դեպքերում մասնավոր շահերը կարող են ձեռք բերել հանրային բնույթ: Օրինակ՝ հանրային քրեական հետապնդման հարուցելու, անձին հանրային պատասխանատվության ենթարկելու իրավահավակնությունը չի գտնվում տուժողի մասնավոր շահերի տիրություն, սակայն տուժողի մասնավոր շահերը կարող են ընդգրկել նշված հանրային միջոցառումները, եթե տուժողին պատճառված վնասի հատուցումը հնարավոր է միայն անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու եւ քրեական պատասխանատվության ենթարկելու եղանակով: Բացի այդ, դատական վարույթին մասնակցող տուժողը, նրա օրինական ներկայացուցիչը կամ լիազոր ներկայացուցիչը դիտվում են որպես մեղադրանքի կողմ եւ հանրայնության սկզբունքի ուժով իրավունք ունեն հանրային մեղադրանքի գործերով իրենց դիրքորոշումը ներկայացնել մեղադրանքի և պատժի վերաբերյալ, բողոքարկել դատական ակտերը ոչ միայն մասնավոր շահերի, այլև հանրային շահերի պաշտպանության նպատակով:

Նույն հոդվածի 5-րդ մասում սահմանվում է, որ դատավարական օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում՝ տուժողը, պարտավոր են օժանդակել քրեական դատավարությունում հանրային շահերի պաշտպանությանը: Եթե Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասում խոսվում է հանրային շահերի պաշտպանությանը մասնակցելու՝ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքի մասին, ապա 5-րդ մասում շեշտադրվում է հանրային շահերի պաշտպանությանը օժանդակելու՝ ֆիզիկական

եւ իրավաբանական անձանց պարտականությունը: Վարույթին օժանդակող անձինք են համարվում վկան, վկայի փաստաբանը, փորձագետը, թարգմանիչը, ընթերական կամ դատական նիստի քարտուղարը, ովքեր օրենքով նախատեսված դեպքերում և կարգով պարտավոր են աջակցել հանրային շահերի պաշտպանությանը, օրինակ՝ փորձագետը պարտավոր է տալ եզրակացություն, թարգմանիչը՝ կատարել թարգմանություն:

Օրենսդիրը հատուկ առանձնացրել է տուժողին ոչ միայն որպես հանրային շահերի պաշտպանությանը մասնակցող, այլև օժանդակող անձի: Հանրային շահերի պաշտպանությանը օժանդակելու պարտականությունը նշանակում է, որ տուժողը, անկախ մեղադրալի կամ մեղադրանքի վերաբերյալ իր մասնավոր դիրքորոշումից, հանրային քրեական հետապնդման գործերով պարտավոր է իրավապահ մարմիններին ներկայացնել հանցագործության իրական հանգամանքները. հանցագործության մասին ներկայացնել իրականությանը համապատասխանող հաղորդումներ, տալ ճիշտ ցուցմունքներ:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ հանրայնությունը, հանդիսանալով քրեական դատավարության հիմնարար ակունք, չի բացառում քրեական դատավարությունում դիսպոզիտիվության՝ որպես քրեադատավարական գործունեության կազմակերպման լրացուցիչ տարրերի առկայությունը: Հայտնի դատավարագետ Ի. Լ. Պետրովիսինը նշում է, որ ուժեղ հանրային ակունքները բնութագրական են ինկվիզիցիոն և ոստիկանական պետությանը, իսկ դիսպոզիտիվության գերակայությունը հատուկ է հասունացած քաղաքացիական հասարակությանը և ժողովրդավարական պետությանը⁵: Քրեական դատավարության հեղինակավոր որոշ դասագրքերում քրեական դատավարության սկզբունքների շարքում, հանրայնության սկզբունքի հետ միասին, նշվում է նաև դիսպոզիտիվությունը⁶, իսկ առանձին հեղինակներ առաջարկում են որպես սկզբունք դիտել քրեական դատավարության հանրայնության և դիսպոզիտիվության հարաբերակցությունը⁷:

Ուկրաինայի նոր քրեական դատավարության օրենսգրքում հանրայնության սկզբունքին զուգահեռ, որպես քրեական դատավարության ինքնուրույն սկզբունք, նախատեսված է նաև դիսպոզիտիվությունը (հոդված 26): Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական վարույթի կողմերն ազատ են օգտագործելու իրենց իրավունքները՝ սույն օրենսգրքով սահմանված շրջանակներում և եղանակներով:

Կարծում ենք, անթույլատրելի է քրեական դատավարական օրենսդրությունում միաժամանակ և՛ հանրայնությունը, և՛ դիսպոզիտիվությունը դիտել որպես ինքնուրույն սկզբունքներ: Քրեական դատավարությունում անկասկած գերակայում է հանրայնությունը, իսկ դիսպոզիտիվ տարրերի առկայությունը պետք է

⁵ Տե՛ս *Петрухин И. Л.* Публичность и диспозитивность в уголовном процессе, Российская юстиция, N 3, 1999, էջ 24:

⁶ Տե՛ս *Уголовный процесс. Общая часть*, Под ред. *В. П. Божева*, М.: Спарк, 2000; *Уголовный процесс*, Под ред. *И. Л. Петрухина*, М., 2001, էջ 70:

⁷ Տե՛ս *Александрова Л. А.* Публичность как основание уголовно-процессуального права, М.: Юрлитинформ, 2007, էջ 25:

դիտել որպես հանրայնության սկզբունքից բացառություններ, բայց ոչ ինքնուրույն սկզբունք:

Քրեական դատավարության դիսպոզիտիվության դրսևորումներ են համարվում օրինակ՝ մասնավոր մեղադրանքի գործերով վարույթը, քաղաքացիական հայցը քրեական դատավարությունում, միջնորդություններ և բողոքներ ներկայացնելը⁸, տուժողի հետ հաշտվելու հիմքով հանրային քրեական հետապնդումը դադարեցնելը, սուբսիդիար մեղադրանքի, արագացված դատական քննության (Նախագծով՝ համաձայնեցման վարույթ) ինստիտուտները⁹:

Միջազգային իրավական արդի զարգացման միտումները վկայում են, որ քրեական դատավարությունում դատավարական առանձին ինստիտուտների դիսպոզիտիվ բնույթը բացարձակ չէ, եւ դրանք կոնկրետ իրավիճակներում կարող են փոխել իրենց բնույթը՝ վերաճելով հանրային ինստիտուտի: Այսպես, հայտնի է, որ մասնավոր մեղադրանքի գործերով վարույթը կարող է հարուցվել բացառապես տուժողի դիմումի հիման վրա և ենթակա է կարճման՝ եթե տուժողը և մեղադրյալը հաշտվում են: Սակայն առանձին դեպքերում հանրային քրեական հետապնդման մարմինները պարտավոր են իրականացնել իրենց հանրային գործառնությունները (նախաձեռնել քրեական վարույթ, հարուցել հանրային քրեական հետապնդում, իրականացնել նախաքննություն) նույնիսկ այն դեպքում, եթե մասնավոր մեղադրանքի գործերով տուժողը դիմում չի ներկայացնում կամ հաշտվում է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Օփուզն ընդդեմ Թուրքիայի գործով (9 հունիսի, 2009թ.) քննարկել է այն հարցը, թե արդյոք իշխանությունները պատշաճ ջանասիրություն են դրսևորել դիմումատուի մոր սպանությունը կանխելու համար: Այս կապակցությամբ Կառավարությունը պնդել է, որ ամեն անգամ, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմինները վարույթ են սկսել Հ.Օ-ի նկատմամբ, նրանք ստիպված են եղել կարճել վարույթը՝ ղեկավարվելով ներպետական օրենսդրությամբ, քանի որ դիմումատուն և նրա մայրը հետ են վերցրել իրենց բողոքները: Ըստ Կառավարության, իշխանությունների կողմից որևէ այլ հետագա միջամտություն կհանդիսանար տուժողների՝ 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքների խախտում: Դիմումատուն պարզաբանել է, որ ինքը և իր մայրը ստիպված են եղել հետ վերցնել իրենց բողոքները Հ.Օ-ի կողմից հնչեցված սպանության սպառնալիքների և գործադրված ճնշման պատճառով: Եվրոպական դատարանը այս կապակցությամբ նշել է, որ որքան մեծ է կրկին անգամ հանցագործություն կատարելու վտանգը, այնքան ավելի հավանական է, որ քրեական հետապնդումը պետք է շարունակվի **հանուն հանրային շահի** (ընդգծումը՝ հեղ.) անգամ տուժողի կողմից իր բողոքը հետ վերցնելու դեպքում: Որոշման 168-րդ կետում վերահաստատել է ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածի ներքո բերված գանգատի առնչությամբ իր արտահայտած այն դիրքորոշումը, որ օրենսդրական դաշտը դատախազական մարմիններին պետք է լիազորած լինել շարունակելու գործով նախաքննությունը՝ չնայած դիմումատուի կողմից իր բողոքները հետ վերցնելու փաստին:

⁸ Տե՛ս *Штоль Д. С.* Диспозитивность и ее отдельные проявления в уголовном процессе Российской Федерации, Автореф. дисс. к. ю. н., Челябинск, 2009:

⁹ Տե՛ս *Касаткина С. А.* Публичность и диспозитивность в Российском уголовном процессе. Автореф. дисс. к. ю. н., М., 2002:

Այսպիսով, հանրայնությունը հանդիսանում է քրեական դատավարության ինքնուրույն սկզբունք, որի հիմնական պահանջն է՝ իրավասու սուբյեկտների պարտականությունը ի պաշտոնե հարուցելու քրեական հետապնդում, իրականացնելու քննություն և լուծելու քրեական գործը:

ПУБЛИЧНОСТЬ КАК ПРИНЦИП УГОЛОВНОГО ПРОЦЕССА

А. С. ГАМБАРЯН

В статье рассматривается этимология развития идей о принципе публичности, точка зрения, функциональное соответствие и структура принципа публичности выдвинутая в теории уголовного дела.

PUBLICITY AS A PRINCIPLE OF CRIMINAL PROCEDURE

A. S. GHAMBARYAN

The article was exactly investigated the genesis of the development of the ideas about the principle of the publicity in the theory of the Criminal Procedure; notion, functional appropriation and the structure of the principle of the publicity.

ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Մ. Յ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Գավառի պետական համալսարանի դասախոս,
իրավագիտության թեկնածու*

Քրեական դատավարության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի համապարփակ դատական պաշտպանությունը ենթադրում է նաև վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման ինստիտուտի արդյունավետ գործառնություն: Վերաքննիչ վարույթը հանդիսանում է անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից բխող՝ դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրացմանն ուղղված ինստիտուտ: Դատական ակտերի վերաքննության կարգով բողոքարկման իրավունքը ինքնին ենթադրում է համապատասխան օրենսդրական մեխանիզմների առկայություն, որը կապահովի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրականացումը:

Վերաքննիչ քրեական դատարանի կողմից քրեական գործերի (դատական ակտերի) վերանայման սահմանների վերաբերյալ հարցի արդյունավետ քննարկումը ենթադրում է վերաքննության էության և նպատակների պարզաբանում: Այսպես, վերաքննության կարգով դատական ակտի բողոքարկումը դատական սխալի վերացման միջոց է, որը միաժամանակ ապահովում է առաջին ատյանի